67. ՆԱԽՐՈՐԴ ԹԱԳԱՎՈՐ

Իրիկ մի ու կնիկ մի կէղնին, էրկու հատ տղա։ Ինք նախրորդ կէղնի։ Կտանի նախրորդ նախիր կարծրցա, հ'իրիկուն, օր գիգա, նախիր կը բերե, կնիկն ու էրկու տղեն կէրթան նախրի հ'առեջ, կը տանին ամեկ տավար ուր տիրոջ թասլիմ կէնին։

Օր մը լե, էդոնց գեղ վողիր գիգա, կըսե.

— Էդա գեղ, ո՞ր շոր կը լըվանա։

Կըսին.—Նախրորդի մի կնիկ կա, էնի կը լվանա։

Էդ նախրորդի կնիկ կը ցուցուն։

Վողիրն է, կը ճամբխե ուր շորեր, դիրմ' էրկու էդ նախրորդի կնիկ կը լըվանա, շատ սիրսուբ, հ'իստակ կը լըվանա, կը դնե, կը ճամբե կէրթա։

Օր մը լե էդ վողիր կըսե.—Իմ շորեր լըվացող ո՞րն է, տվէք ընծի նշանց։

Կըսեն, ըշթա ֆիլան տեղն է, նախրորդիմ կնիկ է, կը տանին նշանց կիտան։

Օր մի կը հեյի ձին, կէրթա նախրորդի դուռ, կնիկ դուռ կէղնի կանուկ, կը թալե թարկ կէրթա։

Հ'իրիկուն նախրորդ գիգա, նա՛ տղեկներ գիգան նախրի հ'առեջ, նա՛ կնիկ։ Նախիր հըմա էնտեղ ցիր ու ցան կէնեն, կըսե՝ «Ախր էդոնց փորձանք մի պատահեր է, օր չէկան նախրի հ'առեջ»։

Էդ տեղ նախիր կը թորկե, կէրթա տուն, կը տեսնի օր էրկու տղեն նստուկ ին տուն։

Կըսե.—Հ'ո՞ւր է ձեր մեր։

Տղեկներ կըսին.—Ջընք զինա, հ'ելավ դուրս, էլ չէկավ ներս։

Նախիր մախիր կը թորկե, կթալե էրկու տղեն շալակ ու կէրթա։

Շատ կէրթա, քիչ կէրթա, գետիմ' ռաստ գիգա, մեկ տղեն կը դնե գետի պռունկ, մեկ լե կը շալկե օր դետից հ'ընցու, գետի օրթա տեգ կհ'ընկնի գետ, ջուր կը քշե կը տանի, էլ ետև չհ'ընկնի։ Կը դառնա մեկել տղի վրեն, կը տեսնա օր էն լե գել[1] վերցուց տարավ։

Կը քերե անկաճի տակ, կթորկե, կէրթա։

Կէրթա էդ վոզիրի քաղաք, էմլա մշկութեն, նախրորդութեն բան կէնա։

Գանք էրկու տղի վրեն։

Էն մեկն կէրթա ջաղցի բանդին կասրովի, շուր կը կտրի, ջաղցըպան կելնի կիշքե օր՝ ջանդակ, կհանե։ Կիսամեռ կէղնի, նա՛ մեռուկ, նա՛ սաղ, կը տանի կուտա հեքիմի կը սաղնա։

Գելն էլ կը տանի, կը տանի օչխըրի մեջ, հովիվ կը տեսնի կիսամեռ, կառնի բերնեն, էն լե կիտա դեղ ու դուրի, յարալի կէղնի, կը սաղցու, կանկըցու։

Կէղնին ամեկ ահագին տղա, կը հասնին, կը շոջնան, իրար չեն ճանչնան։

Կելնին էդ էրկու տղեն լե կէրթան էն վոզիրի քաղաք, կաշխատին, ուրանց կապրին։

Օր մը լե գիգան էդ վոզիրի քաղաք դալվաթ խուշի կէնին։ Կըտեսնին, դալվաթի հավք վիր գլխուն կը թառի՝ էնի նըստըցուն թագավոր։

Դալվաթի հավք կը թողին, կէրթա կը նստի էդ նախրորդի գըլխուն։ Կը զարկեն, էդ հավքուն կը ծեծեն, կը տանին նախրորդին կը մտուն օտաց ճամբախ, չէղնի, դալվաթ խուշին կէրթա կը թառի օտաց ճամբխու տանքին։

Կը տանին մտուն թավլեն, կէրթա կը թառի թավլի տանքին, ինչ կէնին, ախըր չարա չէղնի։ Կբերին նախրորդին կը դնին թագավոր։

Էդ էրկու տղեն լե, կբերեն դնեն էդոր առջև մշկութեն, խղմաթ-մզմաթ կէնին։

Տղեկներ էմլե չըն ճանչնան հ'իրար, նա տղեկներ կը ճանչնան հ'իրարու, նա հեր՝ ուրանց։

Օր մի էրկու տղեկներ կը նստին, իրարու խըսա կէնին։

Էն մեկ տղեն կըսե.

---

1 Ընադրում՝ գել չիք (Ս. Կ.)։

— Մենք էրկու ախպեր ինք, ես պզտիկ իմ էղի, իմ հեր նախ-
րորդ էր, իմ հեր հ'ըմնօր նախիր կբերեր, մենք էրկու ախպեր ու
իմ մեր կէրթենք հ'առեջ, կը տանենք տավրներ տեր բը տեր կէ-
նենք։ Օր մը լե իմ մեր հ'ելավ դուրս՝ չգիցանք ի՛մալ էղավ, իմ հեր
էկավ, մեզի շալկեց տարավ, ես հ'ընկեր իմ գետի մեջ, գացեր իմ
առի ջաղցի բանդ, շաղցպան լե ընծի բըռներ, սաղցուցերա։ էն մե-
կել ախպեր գետի պոկից իմալ էղեր է՝ էլ չըմ դինա։

էն մեկել ախպերն էլ հըմալ կը պատմե գլխուցեն, կըսե.

— Ընծի էլ գետու պոկեն գելն է վերցի տարի օչխարի մեջ,
հովիվ բոներ է գիլու բերնեն առի, տվիր է դեղ ու դուրի, իմ բըրեն-
ներ սաղցուցեր է։

Կը ճանչնան էդ տեղ իրար, սարվախթ կէղնին օղորդ, ամա
հ'իրարու շիտակ չեն էնի, օր իրար ճանչնան։

Էրկու իրեք օր վոզիր գիգա թագավորի մոտ կը զրուցին հ'իրա-
րու հետ։

Օր մը լե էդ վոզիրի կնիկ կըսե.

— Ըշթա դու կէրթաս թագավորի մոտ կը զրուցես, ես կը մնամ
մինակ, կը վախենամ, ես լե դիգամ քու հետ։

Կըսե.—Օր հըմալ է, ես կէրթամ, թագավորի մշկներուց էրկու
հատ կը ճամբիեմ հ'իգան նստին քու չադրի դուռ, հարի ես դառ-
նամ հ'իգամ, չվախենաս։

Կէրթա, էգ էրկու ախպեր կը ճամբխե, գիգա ուր կնկա մոտ։

Կը նստին հըմալ հեռուն չադրի դուռ, էմ լե էն հըմալ գլխուց,
էրկու ախպեր ուրանց գլխու գալած խըսա կէնին, կըսին՝ «Մենք
հ'իրարու ախպեր ինք»։

Մեր կը լսե, կուրախնա, կը հասնի փաթվի տղեկներու վիզ,
կըսե.

— Ես ձեր մերն իմ, դուք իմ տղեկներն իք, ըշթա իդա լե էն
մըր գեղի վոզիրն է, օր էկավ էրկու իրեք դիր տվեց շոր լվացի։ Օր
մի, ես դուռնի՝ էկավ թալեց ուր թարկ, բերեց էրից ուրին կնիկ։

Կելնի կառնի էրկու տղեն, մեկ էն կուշտ, մեկ էն կուշտ, կը
պագվին, կը սիրվին, կը ծռին, ծրոթրփին, կառնին իրար ու պառ-
կին քնին։

Վոզիրն հ'անգան դախ գիգա, կտեսնա օր կնիկ առած են օր-
թեն էրկու ծառեն ու պառկած են։

Կըսե.— Կանի քաշեմ իմ թուր, իրեքին էլ մորթիմ։

Կը դառնա, կըսե.— Չէ, կանի ես էրթամ թագավորին ըսեմ, քու
ծառեք գացած առած են իմ կնիկն ու պառկած են։

Կէրթա վոզիր թագավորին կըսե.

— Ըշթա, օր քու ծառեք ճամբխի իմ կնկա պաշտպանութենի համար, առած իմ կնիկ ու պառկած են՝ մեկ էն կուշտ, մեկ էն կուշտ։

Թագավոր կելնի, վոզիրի հետ գիգա։ Գիգա կը տեսնի օր օզորգա, կնիկ օրթեն, մեկ ծառեն էն կուշտ, մեկ էն կուշտ։

Կիսանչե ծառաներուն ու վոզիրի կնկան, թագավոր կըսե.

— Հ'ելե՛ք, ձեր գլուխ չալատ է։

Կելնին։ Կնիկ կըսե.

— Աստված սիրեք՝ կա՛նեք, էրկու խոսք ըսիմ, մեկ լե մեր գլուխ չալատ ձեզի։

Կըսե.—Իտոնք իմ էրկու տղեկներն են, ես լե նախրորդի կնիկ ի, ըշթա վոզիր էկավ մեր գեզ՝ դիր մի էրկու տվեց ուր շորեր լվացի, հ'ելավ ընծի փախցուց բերեց։ Նախրորդ օր էկեր, գացեր է տուն, ես տուն չեմ էղի։ Շալկեր է իմ էրկու տղեն, առեր է էկի, մեկ հ'ընկեր է գետի մեջ, չաղցպան է բռնե, մեկ լե գել տարեր է օչխրի մեջ, հովիվն է առեր բերնեն։ Մըկա էրկուս լե սաղցուցեր են։ Էկած են աշխատելու, էղեր են թագավորին ծառա։ Էկան նստան իմ չադրից հեռուն ու հ'իրարու խըսա կէնին, ես անկաճ էրի, լսի, ճանչցա օր իմ տղեկներն ին, առա իմ ծոց, պառկանք։

Էն տեղ թագավորն էլ կը ճանչնա, օր էդա ուր կնիկն ու ուր տղեկներն են։

Կըսե.—Ըշթա, ես նախրորդն իմ, դու իմ կնիկն ես, էդրանք լե իմ տղեկներն ին, էկեր եմ էդա տեղ էղի թագավոր։

Վոզիրի գլուխ կիտա զարկել, կառնի ուր կնիկն ու էրկու տղեն, կը տանի կուրախանան վըր իրարու։

Էնդոնք հասան ուրանց մուրազին, դուք լե խասնիք ձեր մուրազին։